600.0373.03.10.18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

3 հոկտեմբերի 2018 թվականի №373Ա
ք.Երևան

«ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2016 թվականի դեկտեմբերի 9-ի №397Ա որոշմամբ «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրված խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման ԼՋ №0001 լիցենզիայի (ասյուհետ՝ ԼՋ №0001 լիցենզիա) պայմանների 14-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձը պարտավոր է մեծածախ ջրամատակարարման, մեծածախ ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագրերը մինչև կնքումը ներկայացնել Հանձնաժողովի համաձայնեցմանը.

բ) Ընկերության 2018 թվականի օգոստոսի 28-ի №ԿԼ/22320 և օգոստոսի 29-ի №ԿԼ/22321 գրությունների ուսումնասիրությունից պարզվել է, որ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն, առանց Հանձնաժողովի հետ նախապես համաձայնեցնելու, Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Արևիկ, Տավուշի մարզի Այրում համայնքի Պտղավան, Բագրատաշեն, Կողբ համայնքի Կողբ, Լոռու մարզի Ախթալա համայնքի Ճոճկան, Սյունիքի մարզի Գորիս համայնքի Խնձորեսկ, Սիսիան համայնքի Անգեղակոթ, Նորավան, Շաքի, Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Արզական գյուղերին մեծածախ ջրամատակարարման, մեծածախ ջրահեռացման ծառայությունների մատուցման պայմանագրեր է կնքել.

գ) Հանձնաժողովը 2018 թվականի սեպտեմբերի 10-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ ԼՋ №0001 լիցենզիայի պայմանների 14-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով.

դ) հարուցված վարչական վարույթի շրջանակում Ընկերությունը հայտնել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պայմանագրի օրինակելի ձևը արդեն իսկ համաձայնեցվել

էր Հանձնաժողովի հետ, վերոնշյալ բնակավայրերի հետ կնքվելիք պայմանագրերը չեն ուղարկվել կրկնակի համաձայնեցման.

ե) Ընկերությունը 2016 թվականի դեկտեմբերի 26-ի №ԿԼ/38 և 2017 թվականի հուլիսի 25-ի №ԿԼ6277 գրություններով ներկայացրել է մեծածախ ծառայությունների մատուցման պայմանագրի օրինակելի ձևը և այն համայնքների և բնակավայրերի ցանկը, որոնց հետ նախատեսվում էր կնքել պայմանագրերը, 2018 թվականի հուլիսի 27-ի №ԿԼ/19032 գրությամբ ներկայացրել է Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնքի Շատվան գյուղի հետ կնքվող պայմանագրի նախագիծը, իսկ խնդրո առարկա հանդիսացող բնակավայրերի հետ մեծածախ ջրամատակարարման, մեծածախ ջրահեռացման պայմանագրերի կնքման վերաբերյալ որևէ տեղեկատվություն չի ներկայացվել.

զ) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է ԼՋ №0001 լիցենզիայի պայմանների 14-րդ կետը, այն է՝ չնայած այն հանգամանքին, որ վերոնշյալ 10 բնակավայրերի հետ կնքված պայմանագրերը համապատասխանում էին նախկինում ներկայացված պայմանագրերի ձևին, այնուհանդերձ չէին ներկայացվել Հանձնաժողովի համաձայնեցմանը, և

հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 47.1-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. ԼՋ №0001 լիցենզիայի պայմանների 14-րդ կետի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
2. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ **Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**

ք. Երևան
3 հոկտեմբերի 2018թ.